Կզօլթօտօ ներքինին թագաւորեաց ամս Գ։ Յաւուրս սորա վախճանեցաւ Տէր Պետրոս կաթուղիկոսն Հայոց 'ի Սեբաստիա, կացեալ յաթոռ Հայրապետութեան ամս ԽԲ։ Այս Կզօլթօտօ աւերեաց զաշխարհն Երզնոյ և կոտորեաց զորդիսն Հարպիկ իշխանին։

Տուկիծն չարանախանձ ընդ դէմ Հայոց՝ որ և էառ զԱնի յԱլփասլանայ, և զԽաչիկ կաթուղիկոսն տարաւ 'ի Սատամպօլ, և եդ 'ի կալանս, թագաւորեաց ամս Ժ։ Իսկ Գագիկ գնաց 'ի Կոստանդնուպոլիս՝ վասըն քննութեան հաւատոյ։ Իսկ իբրև դարձաւ 'ի Կեսարիա, սպան զՄետրապօլիտն ընդ շանն իւրոյ՝ զոր Արմէն ձայնէր։

Տուժէլն թագաւորեաց ամս Ի։ Պղծութեամբ թագուհւոյն, զոր ելեալ զօրօք 'ի Պարսս ըմբռնեցաւ յԱլփասլանայ. և հարկ եդեալ 'ի վերայ նորա, եթող զնա. և ոչ ընկալան զնա ազգն Յունաց, այլ թագա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան